ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(12)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№2(12)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№2(12)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(12)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դրամագիտություն

Ալեքսանդր Հակոբյան

Արխիպելագից դեպի մայրցամաք. «Հայաստանի դրամագիտություն» հասկացության շրջանակը (*ռուս.*) 8

Ժակ Նուրպեկլեան

Հին դրամների՝ պատմական և աշխարհագրական տեղեկությունները ստուգելու ունակությունը (*անգլ.*) 23

Հաամիկ Մարգարյան

Հայաստանի անձնավորումը Պարթևական հաղթակամարի վրա՝ ըստ Օգոստոս կայսեր մ. թ. ա. 19 – 16 թթ. հաղթադրամների (*ռուս.*) 27

Մաքսիմ Եվադեան

Հայոց թագուհի Էրատոյի մասին. պատմական և դրամագիտական ուսումնասիրություն (*անգլ.*) 38

Մաքսիմ Եվադեան, Հովանն Սիմոնեան

Մարիամ Կարսեցու չհրապարակված կնիքը և Բագրատունիների տան՝ Դավիթյան ծագման հավակնությունը (*անգլ.*) 47

Շահէն Յովսէփեան

Պարսկական դրամներ՝ թողարկված Երևանում (*հայ.*) 55

Ռոբեն Վարդանյան, Արմինե Զոհրաբյան, Համլետ Պետրոսյան

Դրամներ Արցախի Տիգրանակերտի պեղումներից (*հայ.*) 74

Ռոյ Առաքելյան

Ակնարկ Տիգրան II-ի դրամական թողարկումների ժամանակագրության մասին (*անգլ.*) 87

Մեյեդ Օմիդ Մոհամմադի, Սաիդ Սոլեյմանի

Հատվել է Իրանի Հյուսիսում. «Մուհր» մակադրոշմներ արծաթե դրամների վրա (*անգլ.*) 95

Վեռա Բոյան

Հայաստանից գտնված Հնդկաստանի Մեծ մողոլների դրամները և դրանց դերը միջազգային առևտրում (*հայ.*) 106

Վլադիմիր Գորոնչարովսկի, Անդրեյ Տերեշչենկո

Տավրիկյան Խերսոնեսի հարավային արվարձանում հայտնաբերված՝ բյուզանդական կայսր Արտավազդի հազվագյուտ սեմիսի մասին (*ռուս.*) 114

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդր Հակոբյան, Լուսինե Ղուշչյան

Մետաղադրամը իրերի վրա. Ռուսաստանի ազգագրական թանգարանի հավաքածուից չորս հայկական զարդերի դրամագիտական վերլուծություն (*անգլ.*) 122

Աստղիկ Իսրայելյան

Դրամների մոգական և գեղագիտական արժեքները (*հայ.*) 132

Արտակ Ասատրյան

Պղնձարդյունաբերությունը և պղնձագործությունը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին – 20-րդ դարի սկզբին (Պատմաազգագրական համառոտ ուրվագիծ) (*հայ.*) 152

Լիլիա Ավանեսյան, Վեռա Բոյան

Գորգը և տեքստիլ ապրանքները Ռուսաստանի հետ հայ վաճառականների առևտրում 17-րդ դարի կեսին – 18-րդ դարի սկզբին (*ռուս.*) 166

Կարինե Բազեյան, Գրիգոր Աղանյան

Մետաղադրամը որպես զարդ Բարձր Հայքի և Շիրակի կանանց ավանդական հագուստի համալիրում (*հայ.*) 180

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Մանուչարյան

Դրամական անվանումների արտացոլումը հայկական վիմագրերում (*հայ.*) 190

Արմինե Ջոհրաբյան, Բորիս Գասպարյան, Անի Ադիգյոզալյան

Կշռաքար՝ հայտնաբերված Արտաշատ մայրաքաղաքի տարածքից (*հայ.*) 206

Ռոբերտո Դան, Անանարիտա Ս. Բոնֆանտի

Նախնական դիտարկումներ Հայաստանի պատմության թանգարանում պահվող Ուրարտական թագավորական թասերի նոր ուսումնասիրության մասին (*անգլ.*) 217

Հայկ Ավետիսյան, Արտակ Գնունի, Արսեն Բոբոխյան, Գագիկ Սարգսյան, Լևոն Մկրտչյան

Ճանապարհային ցանցի գործարկումը բրոնզ-երկաթեդարյան Սյունիքում՝ խոշոր բնակավայրային ագլոմերացիաների գոյության պայմաններում (*հայ.*) 225

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Ժիրայր Քրիստրիանեան

Ռոբերտ Վ. Էդվարդսի հայկական և հարակից մինչհետմիջնադարյան ժամանակաշրջանի դրամների հավաքածուն՝ Կիլիկիայում գտածոների վայրերի փաստագրված տվյալներով (*անգլ.*) 242

Ռոբեն Վարդանյան, Արմինե Ջոհրաբյան, Հասմիկ Հովհաննիսյան

Ոչ թանգարանային դրամագիտական թվային շտեմարան թանգարանում (*հայ.*) 260

Զարուհի Բարսեղյան

«Պահպանելով անցյալը և ներկայացնելով ներկան՝ կառուցում ենք ապագան». ՀՀ կենտրոնական բանկի այցելուների կենտրոն (*հայ.*) 267

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 271

DOI:10.56653/18290361-2023.12-190

Աշոտ Մանուչարյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ashot.manucharyan.1959@mail.ru

ԴՐԱՄԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ*

Հիմնաբառեր. դահեկան, դուկատ, դրամ, սպիտակ, ստակ, թանկա, թուման:

Ներածություն

Բազմասփյուռ հայկական վիմագրերը բավարար քանակությամբ նյութեր են պարունակում Հայաստանում տարբեր պատմական փուլերում դրամական զանազան անվանումների կիրառության վերաբերյալ: Արդեն զարգացած միջնադարից սկսած (9-րդ դար), երբ վերելք ապրեցին արտադրողական ուժերը, ծաղկեց քաղաքային կյանքը, աշխուժացան արհեստներն ու առևտուրը, խորացան միջպետական կապերը, ազգամիջյան շփումները, հասարակական-տնտեսական հարաբերություններում նախկին բնահարկին փոխարինելու եկավ հարկերը կանխիկ դրամով գանձելու գործառույթը: Այն արմատացավ ոչ միայն ավատատիրական հարաբերություններում, այլև եկեղեցում, որը վանքահպատակ հարկատու գյուղերից գանձվող «տասանորդը» նախընտրում էր արդեն վերցնել կանխիկ դրամով: Այդ երևույթը, վիմագրագետ Գրիգոր Գրիգորյանի պարզաբանմամբ, տեսնում ենք Սյունիքի եպիսկոպոսական վիճակում սկսած 9-րդ դարի 30-ական թվականներից (Գրիգորյան 1966, 47):

Հենվելով վիմագրական հարուստ նյութի վրա, որ հիմնականում մեզ հանդիպում է զարգացած ավատատիրության շրջանից, մենք փողոն առավելապես մարմնավորված ենք տեսնում հետևյալ անվանումների մեջ.

Դահեկան (դեկան)

Նշված դրամական անվանումների մեջ ամենագործածականը դահեկանն է: Դեկանը նրա ժողովրդական խոսակցական կրճատ ձևն է: Մեզ հայտնի վիմագրերում մեկական անգամ են գործածվել «կինէին(ք)»-ը, «սպիտակ սուլտանի»-ն, «թանկա»-ն և «դիան»-ը, որոնց կանդրադառնանք ավելի ուշ, ըստ տեղի:

Դահեկան (դեկան) անվանումը, ըստ լեզվաբան Հրաչյա Աճառյանի, «ծագել է հին պարսկական մի ձևից, որը նշանակել է "Դարեհական, Դարեհի նշանով

* Ստացվել է 20.07.2023թ., ուղարկվել է գրախոսման 22.07.2023թ., ընդունվել է տպագրության 01.11.2023թ.:

դրամ"», որի բառահիմքում «պիլ. պրս. ه (dah) "տասը"» բառն է (Աճառյան 1971, Ա, 614 – 615):

Ընդհանրապես, խոսելով դահեկանի մասին, կարևոր է պարզել, թե ինչ նյութական մարմնավորում է ունեցել դրամական այդ միավորը, այսինքն՝ ունեցել է ոսկու, արծաթի, պղնձի, թե՞ այլ մետաղի պարունակություն, որքա՞ն է եղել նրա կշիռը, արդյո՞ք այն եղել է զուտ ոսկի, կամ արծաթ, թե՞ ոսկի դահեկանը եղել է սոսկ ժամանակի ընթացիկ վարում (կուրս): Նախ պետք է ասել, որ այս հարցում կային գիտական տարակարծություններ պատմաբանների, տնտեսագետների, դրամագետներ մոտ: Ի վերջո, գնալով ավելի ու ավելի արմատավորվեց այն տեսակետը, թե միջնադարում թանկագին մետաղների միջից շրջանառության ասպարեզում գերակշռություն է ունեցել արծաթե դրամը, քան ոսկին: Վերջինս հանդես է եկել հազվագյուտ պայմաններում և գլխավորապես հաշվարկի նկատառումներով: Տնտեսագետ Թադևոս Ավդալբեգյանը բերում է հետևյալ օրինակը. «Եթե մեկը մի գնում է կատարել երկու դահեկանով, դա չի նշանակում, թե նա անպայման վճարել է երկու ոսկի դահեկան, վճարումը կարող է կատարվել, և մեծ մասամբ կատարվել է արծաթով "ըստ ժամանակի վարման", ինչպես «Դատաստանագրքում» ասում է Մխիթար Գոշը, այսինքն՝ ընթացիկ կուրսով: Երկու դահեկանի գնում կատարողը վճարում է ոչ թե երկու ոսկի, այլ ասենք 2 X 10 արծաթ դրամ՝ հաշվելով 1 դահեկանը 10 դրամ… Ըստ ժամանակի վարման՝ երկարատև ու հաճախակի գործածության արծաթատեսակների որոշ քանակին հատկացվում է դահեկան անունը, և այս դահեկան բառը, որ առաջ իրական ոսկի էր ենթադրում, դառնում է արծաթի մի որոշ գումարի անուն, մի տեսակ "արծաթ դահեկան": Ոսկե փողը չքանում է և դառնում հաշվեդրամ, արծաթը մնում է իրական փող ու իրական վճարամիջոց: Արծաթ փողի մեծ միավորներ էլ կարող են հետագայում գոյություն չունենալ և սոսկ հաշվեդրամ դարձած լինեն՝ իրենց տեղը զիջելով ավելի մանր արծաթատեսակների և այլ մետաղների» (Ավդալբեգյան 1927, 27 – 28):

Որ դահեկանը միջնադարում սկզբից եղել է ոսկե փող, հաստատվում է մատենագրական բազմաթիվ օրինակներով, օտար աղբյուրներով, ինչպես նաև հայտնի դրամագետ Խաչիկ (Խաչատուր) Մուշեղյանի ուսումնասիրությամբ:

Դեռևս արաբական տիրապետության ժամանակ՝ Աբդ ալ-Մալիքի օրոք, հիջրայի 77 (696/97) թվականին սահմանվեց դրամակշռային համակարգ, որը շուրջ 300 տարի իշխեց միջազգային ապրանքադրամական հարաբերություններում (Մուշեղյան 1983, 135): Ըստ այդ համակարգի՝ «դրամների թողարկումը սահմանվեց երեք մետաղների գծով՝ ոսկի, արծաթ և պղինձ: Ոսկե դրամի համար որպես կշռային չափ սահմանվեց 4,35 գ մաքուր ոսկի և անվանվեց دينار (dinar)՝ սերված հին հռոմեական (լատիներեն) denarius բառից: Հայերի մոտ այն շարունակում էր կոչվել դահեկան՝ իբրև ոսկեդրամի ավանդական անուն: Արծաթե դրամը սահմանվեց 2,97 գ (մաքուր արծաթ) և կոչվեց درهم դիրհեմ: Վերջինս հունական ΔΡΑΧΜΗ դրախմայի արաբական արտահայտությունն էր: Պղնձե դրամները կայուն կշռային չափեր չունեին և հանդես էին գալիս մեծ մասամբ 3 – 5 գ քաշով» (Մուշեղյան 1983, 135):

Աբբասյանների ժամանակ (750–1258) դրամային միավորները դարձյալ մնում էին ոսկին, արծաթը և պղինձը՝ նույն քաշերով (Մուշեղյան 1983, 148):

Միջազգային շուկայում գործառական նշանակություն ունեին առավելապես արծաթե դրամները: Ոսկին այն ժամանակներում համեմատաբար քիչ էր հանդես գալիս (Մուշեղյան 1983, 148):

10-րդ դարի վերջերին հատվում էին պղնձի խառնուրդով ցածր որակի արծաթե դրամներ (Մուշեղյան 1983, 215):

«XI դ. սկզբից միջազգային դրամների մեջ տիրապետող էին դարձել բյուզանդական ոսկե դրամները» (Մուշեղյան 1983, 148):

12-րդ դարում սկսվում է արծաթի «ճգնաժամը»: Հայաստանում տարածում գտան սելջուկյան դրամները, որոնք բացառապես պղնձից էին և երբեմն կոչվում էին արծաթ դրամի անունով՝ դիրհեմ (Մուշեղյան 1983, 148):

13-րդ դարի 30-ական թթ. դրամային շրջանառությունը Հայաստանում թևակոխում է իր զարգացման նոր փուլը, որը բնորոշվում էր մոնղոլական արծաթ դրամների գործածմամբ: Դրանք կշռում էին 2,74–2,83 գ արծաթ: Թողարկվում էին երբեմն ծանր քաշի արծաթ դրամներ, որոնք կոչվում էին արծաթ դինարի (հայկական անվամբ՝ արծաթ դահեկան): Նույն ժամանակաշրջանում գործածվում էին նաև սելջուկյան արծաթ դրամները (Մուշեղյան 1983, 222–223):

Մոնղոլական շրջանում «պղնձի դրամի համար առաջացել էր նաև դանգ անունը» (Մուշեղյան 1983, 222–223):

Սակայն այս ժամանակներում Եվրոպայում միջազգային առևտրի ասպարեզում գլխավոր ոսկետեսակը բյուզանդական իպերպերն էր (միջին քաշը՝ 4,20–4,40 գ ոսկի), իսկ արծաթատեսակը՝ արաբական դիրհեմը (միջին քաշը 2,97 գ մաքուր արծաթ):

Եթե դրությունն այսպիսին էր հեռավոր Եվրոպայում, նույնն ավելի հավաստի էր Հայաստանի համար, որի մի մասը բյուզանդական էր, իսկ մյուսը՝ արաբական, հետո էլ սելջուկյան, ապա մոնղոլական (վերջիններիս ժամանակ արաբական դրամների տեղը բռնում է մոնղոլականը) (Ավդալբեգյան 1927, 8):

Վերը նշվածներից կարելի է ենթադրել, որ դահեկանը երբեմն եղել է ոսկի փող, հատկապես Հայաստանի բյուզանդական հատվածում և երբեմն էլ արծաթ փող՝ արաբական, ապա մոնղոլական մասում:

Խոսելով դրամների մասին՝ հարկ է նշել, որ դրանց կշիռները, չափերը հնում նույնը չեն եղել զանազան դարաշրջաններում (Մանանդյան 1930, 3):

Երբեմն հայկական արձանագրություններում ոսկե դահեկանը հիշատակվում է պարզապես ոսկի անվամբ: Այսպես, Հերհերի Ս. Աստվածածին եկեղեցում 1297 թ. արձանագրված է, որ ոմն Կորկոր ոսկով գնում է հողամաս, նվիրաբերում սուրբ ուխտին և իր հոր՝ Սարգսի համար մեկ պատարագ պատվիրում (ԴՀՎ III, 1967, 52): Նմանապես Գրիգոր անունով մեկը Տեր Դավթի առաջնորդության տարիներին Մակարավանքի գլխավոր՝ Ս. Աստվածածին եկեղեցուն ոսկի է նվիրաբերում՝ ԵՏ ՈՍԿԻ ԳԻՆՍ ԵԿԵՂԵՑՈՅՍ, և տեղի միաբանները տալիս են :Ա: (1) ԱԻՐ ԺԱՄ Ի ՏԱԻՆԻ ՍԲ ԳՐԻԳՈՐԻՆ (ԴՀՎ VI, 1977, 173) : Նույն վայրում մի Լիպարիտ իր տիկնոջ հետ տալիս են Ի ԳԻՆ ԵԿԵՑԵՑՈՅՍ ՈՍԿԻ և ստանում տարվա մեջ մեկ պատարագ (ԴՀՎ VI, 173): Մակարավանքում նրանցից ետ չեն մնում նվիրա-

տուներ Հովսեփը (ԵՏ ՈՍԿԻ Ի ԳԻՆՍ ԵԿԵՂԵՑՈՅՍ) և Պողոսը (ԵՏ ՈՍԿԻ ԵԿԵՂԵՑԻՍ), որոնք նույնպես ոսկի ընծայել են մեկական պատարագի դիմաց (ԴՀՎ VI, 174): Հայրավանքի գավթի (XIII դ. սկիզբ) արևելյան պատին արձանագրված է, որ Աղլար աղան տվել է ՈՍԿԷԳԻՆ Ի ՍԲ ՍՏԵՓԱՆՈՍՍ, ԵԻ ՄԻԱԲԱՆՔՍ ՏԻՆ :Զ: (6) ԱԻՐ ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ՍԲ ԽԱՉԻՆ (ԴՀՎ IV, 1973, 73):

Ս. Ավագյանի և Հռ. Ջանփոլադյանի պարզաբանմամբ՝ «*ի գին եկեղեցոյս* բանաձևը կարող է նշանակել ոչ միայն հուշարձանի շինարարության հետ կապված ծախսերը, այլ նաև նրա կահավորման կամ կամ նորոգման վրա ծախսվող միջոցները» (ԴՀՎ VI, 174): Սակայն մի բան ակնհայտ է, որ նույն ժամանակաշրջանում (Մակարավանքում Տեր Դավթի վանահայրության տարիներին՝ 1220–1250) բոլոր դեպքերում էլ ոսկին նվիրաբերվել է մեկ պատարագի համար, բայց ինչքա՞ն ոսկի, չի հստակեցվում: Ստորև հղվող վիմագիր հատվածները լրացնում են այդ բացը.

1053 թ. Սողոմոնի որդի Հովհաննեսը, հիշելով իր պանդխտությունը, սեփական արդար ունեցվածքից :Ի: (20) դահեկան է նվիրաբերում Անիի Խամբուշենց Ս. Աստվածածին եկեղեցուն, որպեսզի վերջինիս սպասավորներն ամեն տարի անխափան մեկական պատարագ մատուցեն իր հոր ու մոր հիշատակին, իսկ իր մահվանից հետո՝ մեկական իր և կնոջ՝ Զահրաւի հիշատակին (ԴՀՎ I, 1966, 51) Այսինքն՝ ստացվում է, որ XI դ. կեսին մեկ պատարագի դիմաց եկեղեցուն ընծայել են 10 դահեկան: Նույն ժամանակ Արքա անվամբ ընծայատուն իր հոգեբաժին :Ժ: (10) ԴԱՀ-ը (ԴԱՀԵԿԱՆ-ը) տալիս է այդ եկեղեցու Սարգիս երեցին, որպեսզի սուրբ Խաչի տոնին պատարագ (մատուցվի) (ԴՀՎ I, 50): Ցավոք, 1893 թ. պեղումներով հայտնաբերված այս արձանագրությունը թերի է, բայց հիմք ընդունելով նախորդ ընծայագիրը՝ կարող ենք պնդել, որ պատվիրվել է մեկ պատարագ: Ուշագրավ է, որ ԴԱՀԵԿԱՆ եզրույթը փորագրված է կրճատ՝ ԴԱՀ՝ առանց պատիվ նշանի: Այն համառոտագրված պատահում է նաև ԴՀ ձևով Ամբերդի՝ Հայոց սպարապետ Վահրամ Պահլավունու 1026 թ. վիմագրում (նույնպես առանց պատիվ նշանի) (Ավագյան 1978, 17) ինչպես նաև Այրիվանքի XIII դ. մի քանի արձանագրություններում (Յովսէփեան 1969, 322, 325, 326):

Վայոց ձորի Թանատի Ս. Ստեփանոս եկեղեցուն նվիրատու Արևհատն ընծայում է :Ի: (20) դեկան, և միաբանները մի օրվա պատարագ են սահմանում (ԴՀՎ III, 84): Նույն եկեղեցուն ոմն Մեթար նույնպես նվիրում է :Ի: (20) դեկան՝ նավասարդին մեկ օր ժամ պատարագի համար (ԴՀՎ III, 84):

Հաղարծնի վանքի գավթին (XIII դ. սկիզբ) ՍՄՊԱՏ և մի ուրիշ ընծայատու (անունը չի պահպանված) տվել են :Ի: ԴԱՀԵԿԱՆ, և միաբանները սահմանել են :Ա: (1) ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ՍՐԲՈՑ ՔԱՌԱՄՆԻՑՆ (ԴՀՎ VI, 29):

Մակարավանքի եկեղեցու գավթում կարդում ենք, որ նվիրատու Շրվանը եկեղեցու տալիս է :Խ: (40) դահեկան և ստանում :Բ: (2) ԱԻՐ ԺԱՄ Ի ՏԱՒՆԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ, ՆՈՐ ՏԱՐԵՄՏԻՆ (ԴՀՎ VI, 185): Նույն վանքի գավթին ընծայատու Արևիկը տալիս է :Ի: (20) դահեկան, և առաջնորդ Դավիթն ու միաբանները սահմանում են :Ա: (1) ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ՅՈՀԱՆՆՈՒ ՆՈՐ ՏԱՐԵՄՏԻՆ (ԴՀՎ VI, 186): Այդտեղ մեկ այլ նվիրատու՝ Հեզկանց Գերգը, տվել է :Կ: (60) ԴԱՀԵԿԱՆ … :Գ: (3) ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ՍԲՈՅՆ ԳԷՈՐԳԱՅ (ԴՀՎ VI, 178):

Նախավերջին երկու արձանագրությունները թվագրվում են հիշատակված Տեր Դավթի առաջնորդության տարիներով՝ 1220 – 1250 թթ.: Նույն Դավթի առաջնորդության տարիներին է սկսվել Մակարավանքի Ս. Աստվածածին եկեղեցու գավթի կառուցումը՝ ձեռամբ Գրիգոր վարդապետին, որի շինության համար Այրարատի կողմնապետ, իշխանաց իշխան Վաչե Ամբերդեցի Վաչուտյանը հատկացրել է 600 դահեկան (ԴՀՎ VI, 178), որն այն ժամանակների համար պատկառելի գումար էր: [Ի դեպ, եկեղեցիներին դահեկանով (դեկանով) խոշոր նվիրատվությունների վիմագրերում հանդիպում ենք դեռևս XI դարից, այսպես, Արծն վաճառաշատ քաղաքից ոմն Հորդոր 1024 թ. Հաղբատի Ս. Նշան եկեղեցուն ընծայում է 300 դահեկան, միևնույն ժամանակ Հայոց մարզպան Տիգրան-Աբլղարիբ Պահլավունին 500 դահեկան է նվիրաբերում Սանահնի մեծանուն ուխտին, 1067 թ. Սահակ և իր կին Խաչաւր Հաղբատի Ս. Նշանին նվիրում էն 600 դահեկան, 1247 թ. Հայոց սպարապետ Պռոշ Խաղբակյանը :ԳՃ: (300) ԴԷԿԱՆ է տվել Բարձրաքաշի սուրբ ուխտի գավթի շինությանը (ԴՀՎ IX, 2012, 138, 28, 143, 377): IX – XIV դդ. դահեկանը եղել է արժողունակ փող, և 300 – 600 դահեկանը պատկառելի գումար էր: 1061 թ. Կոշավանքի առաջնորդ հայր Հովհաննեսը, բազում աշխատությամբ, Կոշի տանուտերերի, դատավորի, ավագ երեցի, մանկտավագի հետ միասին կարողացել են ազատել վանքի բնաջուր առուն 200 դահեկանով (Ավագյան 1978, 46, 100): Այդ շրջանում (1045 – 1064 թթ.) կենտրոնական Հայաստանում իշխում էին բյուզանդացիները, որոնց օրոք Հայ եկեղեցին հարկվում էր]:

Նույն Մակարավանքի Ս. Աստվածածին եկեղեցու գավթում ընթերցում ենք, որ ոմն Գազան Վարագա տոնին մեկ ժամ պատարագի համար նվիրաբերել է :Ի: (20) դահեկան, իսկ մեկ այլ նվիրատու՝ Հոգեդեղ, նույնքան գումար՝ Ս. Սուքիասեանց հիշատակի օրը մի ժամ պատարագի համար (ԴՀՎ IX, 181, 182): XIII դ. առաջին կեսին Բարձրաքաշի վանքին Սիրապաշտ անվամբ նվիրատուն տվել է :Ի: (20) ԴԱՀԵԿԱՆ և ստացել :Ա: (1) ԱՒՐ ԺԱՄ ՁԱԾԱԾԱԾՆԻՆ ՇԱԲԱԹ ԱՒՐՆ (ԴՀՎ IX, 384): Թանատի վանքի Ս. Ստեփանոս եկեղեցուն ընծայատու Օքսուլիտը հատկացրել է :Խ: (40) ԴԵԿԱՆ … :Բ: (2) ԺԱՄ ՍԲ ՍԱՐԳՍԻՆ (ԴՀՎ III, 81):

Կիրակոս վարդապետ Գանձակեցի պատմիչը Նոր Գետիկ վանքին (Գոշավանքին) նվիրաբերել է :Ի: (20) ԳԻՐՔ ԵՒ :Խ: (40) ԴԱՀԵԿԱՆ, :Ա: (1) ՇՈՒՐՋԱՌ ԵՒ ԴՐԻ ԴԱՍԵՐՍ: ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՏՈՒԻՆ ՄԵՋ :Բ: (2) ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ԹԱԴԵՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ (ԴՀՎ VI, 91): Նույն եկեղեցու չորս միաբան եղբայրներ տվել են :Խ: (40) ԴԱՀԵԿԱՆ … :Բ: (2) ՊԱՏԱՐԱԳ-ի համար (ԴՀՎ VI, 92):

Խադարի (Խադայի) վանքի զանգակատան արևելյան պատին արձանագրված է, որ ընծայատու Շերբարիքն իր ՎԱՉԱՆՑ ԿԵՄՆ վաճառում է :ԻԵ: (25) դեկանի Տեր Ռոբինի վկայությամբ, մի ժամ պատարագի համար (ԴՀՎ V, 1982, 128): Տեր Ռուբենը հիշատակվում է Խադարավանքի եկեղեցու սյուներից մեկի 1265 թ. արձանագրությունում (ԴՀՎ V, 129):

Ավագ Սարգիս նվիրատուն Հաղբատի Ս. Նշան եկեղեցուն ընծայում է Ծ (50) ԴԱՀԵԿԱՆ, և Տեր Հովհաննես առաջնորդն ու միաբանները սահմանում են

ՊԱՏԱՐԱԳ ՋԵՂԻԱԿԱՆ ԿԻՐԱԿԵՆ նրա հոր՝ Խոսրովի և եղբոր՝ Քարիմի համար[1] (ԴՀՎ IX, 147)։ Տեր Հովհաննեսը Հաղբատավանքի առաջնորդ է հիշատակվում 1257 – 1288 թթ. (ԴՀՎ IX,148)։

1313 թ. ոմն Վախթանգի ամուսին Օթախաթունը :Ճ: (100) դեկան է նվիրաբերում Թանատի վանքի Ս. Ստեփանոս եկեղեցուն և պատվիրում տարեկան :Դ: (4) օր պատարագ, որից :Բ: (2) օրը՝ Ծառազարդին, :Բ: (2)-ը՝ Ջատկին (ԴՀՎ III, 77)։

1326 թ. միաբանվելով Թանատի վանքի Ս. Ստեփանոս և նրան հյուսիսից կից Ս. Նշան եկեղեցիներին և ընծայելով :Ճ: (100) դեկան՝ նվիրատուներ Ասլան Ափան և իր որդիները պատարագ են պատվիրում են Ջատկի շաբաթ օրը (ԴՀՎ III, 77)։ Այդ գումարի դիմաց պետք է սահմանվեր տարեկան չորս օր ժամ պատարագ, բայց արձանագրված է մեկի մասին։ Ենթադրելի է, որ այդ մեկը մատուցվել է միաժամանակ վերոհիշյալ երկու եկեղեցիներում մեկական՝ հոր (Ասլան Ափայի) և նույնքան նրա որդիների համար։ Ուշագրավ է, որ ԴԵԿԱՆ-ը համառոտագրված է ԴԿ՝ առանց պատիվ նշանի։

Վերը նշված օրինակներում նկատում ենք մի հետաքրքրական օրինաչափություն, այն, որ միջնադարում եկեղեցական գլխավոր արարողությունը՝ ժամ-պատարագը, ունեցել է իր որոշակի միջին գինը՝ 11-րդ դարում 10, իսկ 12 – 14-րդ դարերում՝ 20 – 25 դահեկան։ Այս հարցին մանրամասն անդրադարձել է Թ. Ավդալբեգյանը։ Նա, ուսումնասիրելով Այրիվանքի բոլոր արձանագրությունները, դրանք համեմատելով ուրիշ եկեղեցիների վիմագրերի հետ, պարզել է, որ միջնադարում իրոք եղել է ժամ-պատարագների որոշակի սակագին, այն է 20 – 25 դահեկան (միջին սակագին)։ Ժամ-պատարագների գներին վերաբերող դեպքերն ու տվյալները Թ. Ավդալբեգյանը խմբավորել է չորս տախտակների (աղյուսակների) մեջ՝ հիմք ընդունելով մի շարք գրավոր աղբյուրներ (Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, Ստեփանոս Օրբելյանի Պատմությունը) և պարզել դահեկանի (ոսկու) և դրամի, սպիտակի (արծաթի) միջին արժեքային հարաբերությունը (1 : 10)։ Քանի որ հնում դահեկանը գլխավորապես ոսկի է եղել, իսկ դրամը՝ արծաթ, ուստի Ավդալբեգյանը ժամ-պատարագների գները ներկայացրել է թե՛ ոսկով, և՛ թե արծաթով[2] (Ավդալբեգյան 1927, 22)։

Փաստորեն ստացվում է՝ եթե մեկ պատարագն արժեցել է 20 – 25 դահեկան, ապա Մեծ պատմագիր Կիրակոս Գանձակեցին 20 գիրքը, մեկ շուրջառը Գոշավանքին նվիրաբերել է անհատույց, ինչպես նաև անշահախնդրորեն կառուցել եկեղեցու բաժանմունքները (ԴՐԻ ՋԴԱՍԵՐՍ, ըստ Ս. Ավագյանի)։

Երբեմն պատարագի գինն կարող էր ավելին լիներ, օրինակ՝ Հաղբատի եռահարկ զանգակատան շինությանը նպաստելու նպատակով քահանա Ներսեսն ընծայել է .Լ. (30) ԴԱՀԵԿԱՆ՝ ՄԵԿ ՊԱՏԱՐԱԳ-ի համար (ԴՀՎ IX, 212)։ Նույն վանքին

1 Եղիական կիրակին Եղիա մարգարեի տոնի կիրակին է։

2 Վիմագրագետ Գր. Գրիգորյանը նույնպես հավաստում է, որ «մեկի դահեկանը հավասար է 10 դրամի։ Պատմիչ Ստեփանոս Օրբելյանի մոտ հաստատվում է այս փաստը՝ «հինգ հարիւր դահեկան, որ լինի 5000 դրամ (Օրբելեան 1910, 357, Գրիգորյան 1966, 56, տողատակ)։

նշանավոր վանահայր Հովհաննես Խաչենեցու եղբայր Պուլտաճին 160 դահեկան է նվիրաբերել՝ նպաստելով Հաղբատի ժամատան կառուցմանը, որի դիմաց տարեկան ստացել է Ե̄ (5) ՊԱՏԱՐԱԳ (ԴՀՎ IX, 167)։ Ստացվում է՝ յուրաքանչյուրը 32 դահեկանի։ 13-րդ դ. 1-ին կեսին հոգևորական Առաքել երեցը Հովհաննավանքի Ս. Կաթողիկե շինությանն ընծայել է :3։ (300) ԴԱՀԵԿԱՆ ինը պատարագի համար (Ղաֆադարյան 1948, 87)։ Այստեղ մեկ պատարագի գինը կազմել է ավելի քան 33 դահեկան։ Մեկ պատարագի գինը կարող էր հասնել անգամ 50 դահեկանի, ինչպես օրինակ Հաղբատի վանքում։ Այստեղ շինարար վանահայր Տեր Համազասպի առաջնորդության տարիներին (13-րդ դ. առաջին կես) նվիրատու Արկաթին, որն իրեն կոչում է ՄԵՂՈՒՑԵԱԼ ԱՂԱԽԻՆ Ք̄Ի̄, այսինքն՝ միանձնուհի, ընծա է տվել :Ծ։ (50) ԴԱՀԵԿԱՆ Պողոս առաքյալի աշակերտուհի, առաջին վկայուհի Թեկղի տոնին մեկ պատարագ մատուցելու համար (ԴՀՎ IX, 188)։

Դուկատ

Հաջորդ դրամական եզրույթը՝ ԴՈՒԿԱՏ, հայկական վիմագրերում տեսնում ենք Անիի անթվագիր արձանագրությունում, երբ նվիրատուն Խամբուշենց Ս. Աստվածածին եկեղեցուն նվիրում է :Խ։ (40) ԴԱՒԿԱՏ՝ պատվիրելով վեց պատարագ (ԴՀՎ I, 50)։ Դրա համար դահեկանով պետք է 60 վճարվեր։ Ստացվում է, որ ոսկեդրամ դուկատի և ոսկի դահեկանի հարաբերակցությունը 1։1,5 է։

Դուկատ անվանումը երբեմն հանդես է գալիս կարմիր ածականի հետ միասին։ Դա արտացոլվում է Գոշավանքի 1283 թ. վիմագրում, որտեղ մանազկերտցի մեծահարուստ պարոն Ումեկի որդի Ճարը հայտնում է, որ իր հայրը ԳՆԵԱԼ ԷՐ ԶԳԵՏԻԿ Ի :ԽՌ։ (40 000) ԿԱՐՄԻՐ ԴՈՒԿԱՏԻ։ Հետևելով հորը՝ ինքը ևս գնում է Յովս գյուղը՝ իր բոլոր սահմաններով, Ի ԴԱՌՆ ԺԱՄԱՆԱԿԻ, ՈՐ ՀԱՅՐԵՆԻՔՆ ԱՐԺԱՆ ԷՐ, ԵՒ ՈՍԿԻՆ ԹԱՆԳ, Ի :ԴՌ։ (4000) ԿԱՐՄԻՐ ԴԱՒԿԱՏ և ընծայում Նոր Գետիկի Ս. Աստվածածին եկեղեցուն (ԴՀՎ VI, 71)։

Այս արձանագրության կապակցությամբ Ա. Հովհաննիսյանը գրում է. «Հողի էժանացման և ոսկու թանկացման գաղտնիքը բացելու համար նշենք, որ այս մի ժամանակ էր, երբ հարկահանների և պարտատերերի երեսից գյուղերը մարդաթափ էին լինում և տեղական ֆեոդալները շահագրգռվում էին զիջել իրենց կալվածքները խոշոր փողատերերին» (Հովհաննիսյան 1957, I, 207)։

Ս. Ավագյանի և Հռ. Ջանփոլադյանի դիտարկմամբ՝ նշանավոր մեծահարուստ պարոն Ումեկի որդի Ճարի այս արձանագրությունը միակ աղբյուրն է, որը հաղորդում է Նոր Գետիկի վանքը, վանքապատկան գյուղերն ու մյուս կալվածքները Զաքարյան իշխանների կողմից Կարինից գաղթած Ումեկին վաճառելու մասին (ԴՀՎ VI, 42) :

Հետաքրքրական է, որ մեկ այլ մեծահարուստ, Ավետեաց որդի Սահմադինը միայն Միենի իր Արքայություն կոչվող այգու դարպասների կառուցման վրա, որոնք ինքն էր նախագծել, ծախսել է 40 000 դուկատ դահեկան (Орбели 1974, 41 – 42)։ Ս. Ավագյանի հղմամբ՝ իտալական դուկատի հիշատակմամբ վիմագրերը, ըստ Հ. Մանանդյանի, «վկայում են հայ վաճառականների առևտրական կապերը

Վենետիկի հանրապետության գործարար շրջանների հետ» (ԴՀՎ VI, 72)։ Մեկ ոսկե դուկատը կշռել է 3,5 գրամ, ունեցել 980 ոսկու հարգ[3]։

Դրամ

Հայագիտության մեջ իշխում է այն տեսակետը, որ միջնադարյան Հայաստանում շրջանառության մեջ է եղել հիմնականում արծաթ փողը՝ իր մի քանի անվանումներով։ Դրանցից ամենատարածվածը ԴՐԱՄՆ է։

Ինչպես վերը ասել ենք, ըստ Հր. Աճառյանի, դրամը ծագում է հունարեն ΔΡΑΧΜΗ բառից, որն արաբերեն արտահայտվում է درهم (դիրհեմ) ձևով (Աճառյան 1971, Ա, 691–692)։ Վերջինս արաբական արծաթ փողի (2,97 գր. մաքուր արծաթ) անվանումն է։ Հայերիս մոտ այն պարզապես կոչվել է դրամ։

Դրամի վաղ վիմագիր հիշատակություններ տեսնում ենք դարձյալ Անիում։ Այսպես, Հայոց սպարապետ Գրիգոր Պահլավունու այրի տիկին Շուշանը (10-րդ դարի վերջ), որը նաև Հայոց տիկնաց տիկինն էր, այսինքն՝ Բագրատունյաց Հայաստանում երկրորդ ազնվազարմ տիկինը թագուհուց հետո, Անիի Գրիգոր Պահլավունի եկեղեցուն նվիրաբերում է :Զ։ (80) դրամ (ԴՀՎ I, 31)։

Գագիկ Ա. Բագրատունու օրոք (990 – 1020 թթ,) Փարպի գյուղի արքունական (պետական) տուրքը, որը կազմել է :Մ։ (200) դրամ, իջեցվել է :Ճ։ (100) դրամի (Մանուչարյան 2014, 139)։

1058 թ. հավատացյալ Գրիգորն իր արդար վաստակից :Ն։ (400) դրամ է ընծայում Անիի Ս. Առաքելոց եկեղեցուն՝ ստանալով տարեկան :Գ։ (3) ԱՒՐ ԺԱՄ (ԴՀՎ I, 13)։

1216 թ. Անիի նահանգի թեմակալ Գրիգոր արքեպիսկոպոսը թողնում է ԶՀԱՐԿՆ ՀՈԳՈՅՍ, ԶՈՐ Ի ՍԿԶԲԱՆԷ ՍԱՀՄԱՆ ԷՐ ՅԱՄԵՆԱՅՆ ՄԵՌԵԼ Է :ԺԱ։ (11) ԴՐԱՄ Ի ՓԱՐԹԱՄԱՑ ԵՒ ԱՂՔԱՏԱՑ (ԴՀՎ I, 14)։ Սա շատ ուշագրավ արձանագրություն է. պարզվում է՝ միջնադարում եղել է հոգու հարկ, որը հարուստներից և աղքատներից գանձվում էր նրանց մեռելների համար։

Սպիտակ

Վիմագրերում արծաթ փողն ավելի հաճախ հանդես է գալիս ՍՊԻՏԱԿ անվանումով։ Այն հատկապես հիշատակվում է 13-րդ դարում։ Թ. Ավդալբեգյանը ոչ մի կասկած չունի, որ սպիտակն ի սկզբանե արծաթ փող էր (Ավդալբեգյան 1927, 9)։

Դրամական այդ միավորը հայկական վիմագրերում ամենուրեք գրվում է «սպիտակ»։ Մեզ ծանոթ վիմագրերից միայն Խորակերտի արձանագրության մեջ կարդում ենք, որ մեծահարուստ Ստեփանոսը՝ Հովսեփի որդին, ԳՆԵՑ ԶԽՈՌԱԿԵՐՏ ԵՒ ԻՒՐ ԳԵՂՆ ԵՒ ԶԱՅԳԻՆ, ՈՐ ՇՂԻԵՐ ՎԱՆԻՑՍ, ՅԱՒԻՏԵԱՆ Ի :ԿՌ։ (60 000) ՍՊԻՏԱԿ ՍՈՒԼՏԱՆԻ (ԴՀՎ IX, 188)։

Թ. Ավդալբեգյանի դիտարկմամբ՝ այս շեշտը, թե այգին գնված է սուլտանի սպիտակով, ցույց է տալիս, որ վերջինս տարբերվում էր սովորական սպիտակից։ (Ավդալբեգյան 1927, 9)։

---

3 «Վիքիպեդիա» էլեկտրոնային հանրագիտարան՝ https://hy.wikipedia.org/wiki/%D4%B4%D5%B8%D6%82%D5%AF%D5%A1%D5%BF։

Կարծում ենք, որ այստեղ խոսքը սելջուկյան արծաթ փողի մասին է. վերը Խ. Մուշեղյանի ուսումնասիրությանը հղելով՝ նշել ենք, որ մոնղոլների աշխարհակալության շրջանում Հայաստանում, բացի մոնղոլական դրամներից գործածվում էր նաև սելջուկյան արծաթ փողը: Ըստ Գ. Հովսեփյանի՝ 60 հազար սպիտակը հավասար էր 6000 ոսկե դրամի (Յովսեփեան 1935, 12, ԴՀՎ IX, 265):

Սպիտակի ստուգաբանությունը՝ համեմատական լեզվաբանական օրինակներով ներկայացնում է Թ. Ավդալբեգյանը. «Բազմաթիվ ազգերի մեջ փոխանակ ասելու արծաթ փող, ուղղակի ասել են սպիտակ: Հռովմեացիներն ու բյուզանդացիները ունեին իրենց արծաթ փողը aspareli, asperi, aspra, aspre-սպիտակ, իտալացիների մեջ նույնի անունն էր biank-սպիտակ: Ֆրանսիացիներն արծաթ փողին ասել են blane-սպիտակ, գերմանացիները՝ Weiss pfennige-սպիտակ պֆեննիգ: Թուրքերը հնում արծաթ փողն անվանում էին agče-սպիտակ, տաճկահայերը արծաթ մեջիդիեյին ասում էին ճերմակ նեջեդիյե կամ սոսկ՝ ճերմակ…

Արդ, եթե սպիտակ գույնի ու արծաթ մետաղի գաղափարների զուգորդությունը գրեթե համամարդկային երևույթ է, եթե մեր "սպիտակն" արծաթ փող էր, և տարածված արծաթ փողն էր, թե՛ Արևմուտքում, ո՛ւ թե Արևելքում, վիմարձանագրությունների մեջ" սպիտակը" մի առանձին փող չէ, այլ հենց նույն արծաթ "դրամ"-"դիրհեմն" է» (Ավդալբեգյան 1927, 9):

«Սպիտակ» եզրույթի կիրառությունը 13-րդ դարի հայկական վիմագրերում ժամանակագրորեն ներկայացրել է Գր. Գրիգորյանը (Գրիգորյան 1966, 48 – 49):

Մեր կողմից շարունակենք ներկայացնել «սպիտակ» – ի կիրառությունը 13-րդ դարի վերջերի – 14-րդ դարի մեզ հայտնի վիմագրերում.

Վերին Աղդան գյուղից մոտ երեք կմ հարավ-արևելք գտնվող ներքին Լաչինգայա գյուղատեղիի Ս. Աստվածածին եկեղեցուն նվիրատու Լուսերեսն ընծայել է :Մ: (200) ՍՊԻՏԱԿ և պատվիրել :Բ: ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ԾԱՌԶԱՐԴԱՐԻՆ (ԴՀՎ VI, 126):

13-րդ դարի վերջերին Քեղուտենց Սարգսի որդիներ Հասանը և Խութը միջնադարի հայտնի հայ մեծահարուստ Ավետենց Սահմադինի որդուց (կամ Ամիրբեկից կամ Հազարբեկից) :Ռ: (1000) սպիտակով գնում են հող, այգի տնկում և նվիրաբերում Ուշիի Ս. Սարգիս վանքին՝ տարեկան ստանալով :Ը: (8) ԱՒՐ ԺԱՄ պատարագ (Բաբայան, Քալանթարյան 2001, 191 – 192):

Մոտավորապես նույն ժամանակներում ոմն Զարուկ իր :ԵՃ: (500) ՍՊԻՏԱԿ արժողությամբ այգին ընծայում է Ուշիի վանքին, որի դիմաց տարեկան սահմանվում է :Դ: (4) ԱՒՐ ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ՍԲ ՍԱՐԳՍԻ (Բաբայան, Քալանթարյան 2001, 193 – 194): Այս և նախորդ արձանագրություններից մակաբերվում է այն օրինաչափությունը, որ XIII դ. վերջերին մեկ պատարագն արժեցել է 100 – 125 սպիտակ: Արդ, եթե այն ավելի վաղ եղել է 20 – 25 դահեկան, հետևապես՝ դահեկանի և սպիտակի հարաբերակցությունը կազմել է 1: 5 – 6,25:

1302 թ. վանական դպրոցի սան Սարգիս Կոշեցին Ս. Հռիփսիմե վանքին նվիրաբերել է :Ռ: (1000) ՍՊԻՏԱԿ, որի դիմաց տարեկան ստացել է :Գ: (3) ՊԱՏԱՐԱԳ (ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2016, 258):

1312 թ. Ծարի իշխանաց իշխան Գրիգոր Դոփյանը :ՌԾ: (1500) ՍՊԻՏԱԿ-ի այգի է նվիրաբերում Նորավանքին և իր տիկնոջ, Սյունյաց Տարսայիճ իշխանաց իշխանի դստեր Ասպայի համար տարեկան պատվիրում վեց պատարագ (ԴՀՎ III, 239):

1313 թ. Լույս և Շաքարխաթուն ամուսիններն Ավանի Ս. Հովհաննես եկեղեցուն են նվիրում «:Ռ: (600) ՍՊ[ի]տակ[ի] ի գինն Սևընճին այգոյն և զմեր գնած տներն», և միաբանները տարեկան սահմանում են «:Դ: (4) պատարագ»: Նույն արձանագրության շարունակության մեջ ասվում է, որ վանեցիները, որոնց անունները չեն նշվում, Լույսի 600 սպիտակից զատ եկեղեցուն տվել են :ԷՃԶ: (750) ՍՊ[ի]տակ[ի] ի Սևընճին այգոյս գինն (Ղաֆադարյան 1975, 203): Այս արձանագրությունն ըստ Կ. Ղաֆադարյանի՝ «բացառիկ է այս բանով, որ այգին 1350 սպիտակով է գնվել և նվիրվել եկեղեցուն, ըստ որում արժեքի մի մասը, 600 սպիտակ, տվել են ամուսիններ Լույսը և Շաքարխաթունը, իսկ մնացած 750 սպիտակը՝ վանեցիները, որոնց անունները չի հիշատակված» (Ղաֆադարյան 1975, 203): Ուշադրության արժանի է փաստը, որ նվիրատու վանեցիների համար պատարագներ չեն սահմանվել:

1321 թ. Արջուկի ամուսին Տիկնացտիկինն Աշտարակի Ս. Մարիանե եկեղեցուն է նվիրաբերում ՓԱՐԱՍԵՆՑ այգու կեսը, որն արժեր :3: (300), նաև՝ ԳՃ (300) ՍՊԻՏԱԿ, որոնց դիմաց տարեկան սահմանվում է :Բ: (2) պատարագ (Սաղումյան 1998, 200):

Այս վերջին օրինակում, ինչպես նաև 1312 թ. վիմագրում տեսնում ենք, որ XIV դ. սկզբներին սուրբ պատարագի համար պատվերով մատուցվող ժամ-պատարագի գինն սպիտակով աճել էր՝ կազմելով 250 – 300 սպ.: Այն անցել է անգամ 300 սպիտակը, ինչպես Ս. Հռիփսիմեի 1302 թ. արձանագրությունում: Դա կարող էր կապված լինել սպիտակի որոշակի արժեզրկման հետ:

«Սպիտակ»-ը վիմագրերում համառոտագրվում է ՍՊ ձևով, միայն Քանաքեռի 1266 թ. արձանագրությունում փորագրված է :Պ: (Ղաֆադարյան 1975, 203):

Ստակ

15-րդ դարից Հայոց մեջ որպես դրամական միավոր արդեն գործածվում էր ՍՏԱԿ-ը: Դրամի ավանդական անվանումները դուրս են գալիս գործածությունից: Ըստ Հր. Աճառյանի՝ ստակը սպիտակի կրճատ ձևն է (Աճառյան 1971,Բ, 264):

1467 թ. Գանձասարի առաջնորդ Տեր Եղիան մի շարք նվիրատվությունների հետ սուրբ ուխտին է նվիրում նաև :Գ: (3) ԸՍՏԱԿ (ԴՀՎ V, 43):

1471 թ. Մի խումբ նվիրատու եղբայրներ (միաբաններ) :Գ: (3) ԸՍՏԱԿ են տալիս Գանձասարի սուրբ ուխտին (ԴՀՎ V, 55):

1499 թ. Գանձասարի վանքին նվիրատու Մելիքը՝ ՈՐԴԻ ՍԱՅՏՈՒՆԻՆ, ԹՈՌՆ ՄԵԾԻ ԱՂԲԱՍՏՈՒ, այլ ընծաներից զատ նվիրաբերում է :Բ: (2) ԸՍՏԱԿՆ (ԴՀՎ V, 45):

1509 թ. Ամենայն հայոց կաթողիկոսի աթոռակալ Ձաքարիա Բ. Վաղարշապատեցին (1506 – 1515 թթ.՝ աթոռակալ, 1515 – 1520 թթ.՝ Հայոց կաթողիկոս) վերաբացում է շահ Իսմայիլի 1507 թ. արշավանքի պատճառով Օշականի ավերված դպրոցը, այնտեղ հավաքում մանուկների և դրանց տարեկան պահպանության համար հատկացնում 105 ստակ (Մեր դաշտային օրագրից):

1546 թ. Աղվանից Սարգիս Ա. Ղշլաղեցի Հասան-Ջալալյան կաթողիկոսը (1546 – 1555), որը որդին էր վերոհիշյալ Մելիքի (մելիք Հատիրի) և թոռը ՄԵԾԻՆ ՍԱՅՏՈՒՆԻՆ, գնում է ՋՀԱՅՐԵՆԻՔՆ ԿԱՍՐԱՅ :Ջ: (6) ԸՍՏԱԿՆ ՄԵՆԱԿ ՏԱՆ :Դ: (4) ԸՍՏԱԿՆ ՈՒ ԿԷՍ ԱՌԱՏՈՒՆՈՑ, :Բ: (2) ԸՍՏԱԿՆ ԿՈՌԱԼԱՆԱ, :Դ: (4) ԸՍՏԱԿՆ ՏՎԻ ՍԲ ՈՒԽՏՍ ԳԱՆՁԱՍԱՐԱ (ԴՀՎ V, 43):

1639 թ. երևանցի Ավագը և նրա կին Դաստագյուլը Փարպիում գնում են :Ա: (1) ՍՏԱԿ մուլք (արաբ. ملك ՝ «ունեցվածք», «սեփականություն»), նվիրաբերում Հովհաննավանքի Ս. Կարապետ եկեղեցուն, որի դիմաց վանքի նշանավոր առաջնորդ, մանկավարժ Ջաքարիա Վաղարշապատեցին՝ վաթսուն միաբաններով հանդերձ պարտավորվում է ամեն տարի ՊԱՏԱՐԱԳԵԼ ՋՔՍ ՎՍ ՄԵՐ ՏՈՆ ՄԵԾԱՀՐԱՇԻՆ … ՈՐՔ ՀԱԿԱՌԱԿԻ, :Ճ: (100) ՈՍԿԻ ՏՈՒԳԱՆՍ ՏԱՑԵՆ (Ղաֆադարյան 1948, 80 – 81): Մեծահրաշ տոնը նկատի ունի Ս. Ծնունդը:

Օրինակներից ակնառու է, որ ստակը համարժեք չէ սպիտակին և հանդես է գալիս ավելի բարձր արժեքային միավորով և գնողունակությամբ:

Եթե հիմք ընդունենք Հովհաննավանքի վերոհիշյալ 1639 թ. արձանագրությունը և այն համեմատենք այլ վիմագրերում տարբեր դրամական միավորներով սուրբ պատարագի մատուցման համար կատարված նվիրատվության համար, ապա կարելի է հաշվարկել, որ 1 ստակը հավասար էր 15 – 20 դուկատի, 20 – 25 դահեկանի, 100 – 150 սպիտակի, 200 – 250 դրամի:

Ուշադրության արժանի է փաստը, որ ստակի գործածության սկզբնավորումը վիմագրերում նկատվում է Հայաստանում կարա-կոյունլու (սև ոչխար) թուրքմենական ցեղախմբի իշխանության (1410 – 1468 թթ,) վերջից, շարունակվում ակ-կոյունլու (սպիտակ ոչխար) ցեղախմբի տիրապետության օրոք (1468 – 1502 թթ,), ապա կիրառվում սեֆյան Պարսկաստանի տերության ժամանակներում (1501 – 1722 թթ,)՝ ընդհուպ 17-րդ դարի վերջին քառորդ:

16-րդ դարի սկզբներին ստակին զուգահեռաբար գործածվել է դրամական միավոր ԹԱՆԿԱ-ն: Մեզ հայտնի արձանագրություններում դա հանդիպում է մեկ անգամ՝ Բուն Աղվանքում. 1511 թ. Աղվանից կաթողիկոս Առաքել Սոկյութլվեցին (1479 – 1511 թթ,) տեղական իշխանավորից վերստին գնում է եկեղեցապատկան Ճալեթ գյուղը՝ ծախսելով :ԳՌ: (3000) ԹԱՆԿԱՅ և այն վերադարձնում Ս. Աստվածածին եկեղեցուն (Կարապետյան 1997, 90): «Թանկա»-ն ծագում է մոնղոլական պղնձադրամ «դանգ»-ից: Ըստ Հր. Աճառյանի՝ «պրս. تنگه tanga մի տեսակ պղնձեայ կամ ոսկեայ դրամ» է եղել (Աճառյան 1971,Բ, 152):

Մեկ անգամ է նկատվում նաև ԿԻՆԷԻՆ(Ք), և դա Հաղբատի Ս. Նշան եկեղեցու հյուսիսային պատին արտաքուստ փորագրված 1655 թ. արձանագրության մեջ: Կ. Ղաֆադարյանը ենթադրում է, որ դա «անգլերեն quiena բառն է, որ հնում ոսկե դրամ էր» (Ղաֆադարյան 1963, 143): Այն վկայում է հայ վաճառականների եվրոպական շփումների մասին:

Թուման

17-րդ դարի կեսից մինչև 19-րդ դարի կես Հայոց մեջ առավելապես գործածված դրամը պարսկական ԹՈՒՄԱՆ-ն էր: Այն եղել է «ոսկի դրամ, սկզբնապէս

հաւասար 10 000 պարսկական դինարի», համարժեք նաև տասը ռուբլի գումարի (Մալխասեանց 1944, II, 125)։ Պարսից 1 թումանը կշռել է 4, 48 գրամ (Ավդալբեգյան 1927, 32)։

Արցախի Ձրվշտիկ կամ Եղիշե Առաքյալի վանքում մի կոտրված զանգակի վրա մակագրված էր, որ այն ձուլել է Շահնան, և որի «գինն է :Գ։ (3) Թուման» (ԴՀՎ V, 112)։ 1653 թ. նվիրատու Խալխալենց Հովհաննեսը Ծ(50) ԹՄՆ (ԹՈՒՄԱՆ) է հատկացրել Վաղարշապատի Ս. Հռիփսիմե եկեղեցու նորոգման համար (Հարությունյան 2016, 273 – 274)։ Հիսուն թումանն այդ ժամանակներում բավական պատկառելի գումար էր։ 1671 թ. մարտիրոսցի պարոն Լալեմը իր հոգեբաժինը՝ Ժ (10) ԹՈՒՄԱՆ և ևս Է (7) ԹՈՒՄԱՆ նվիրաբերել է Օձոփի Ս. Աստվածածին վանքին (Այվազյան Ջ, 2010, 42)։

Նույն թվին Լալի (հնարավոր է՝ նախորդ նվիրատուն լինի), նրա կողակցի, նրանց երեք որդիների և եղբոր՝ պարոն Էլիազի կողմից ևս Դ (4) ԹՈՒՄԱՆ է ընծայվել Օձոփի Ս. Աստվածածին վանքի եկեղեցուն։

1672 թ. մարտիրոսցի Տեր Ղազարը Բ (2) ԹՈՒՄԱՆ է նվիրաբերել ի խոնարհումն դռանն Օձոփի Ս. Աստվածածին վանքի եկեղեցու[4] (Այվազյան Ջ, 2010, 40)։

1681 թ. Արցախի Բերձորի շրջանի Միրիկ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցուն տանուտեր Նօարգը, որը նաև այդ սրբատան վերակացուն էր, տալիս է :Ե։ (5) ԹՈՒՄԱՆ, նույնքան գումար է հատկացնում նաև Մենտրկիա վարդապետը (ԴՀՎ V, 196)։

1695 թ. Բանանց գյուղի Թարգմանչաց անապատին նվիրաբերվում է :Ա։ ԹՄՆ (թուման) և պատվիրվում տարեկան :Դ։ ԺԱՄ պատարագ (ԴՀՎ V, 264)։

Այս արձանագրությունից բխում է, որ 17-րդ դարավերջին 4 թումանը համարժեք էր 1 ստակի։

1717 թ. Մկրտիչ վարդապետը կառուցում է Չարեքդարի անապատի պարիսպը՝ ծախսելով «:ԻԸ։ (28) թուման. Ովանես վարդապետն տուաւ :Ժ։ (10) թուման. շինեցաւ իշխանութեամբ սորա» (ԴՀՎ V, 268)։

Դիզակ գավառի տիրակալ, Խամսայի մելիքությունների ընդհանուր կառավարիչ մելիք Եգանը 18-րդ դ. առաջին կեսին Տաթևի Մեծ անապատին :Ե։ (5) ԹՈՒՄԱՆ ՏՈՒԱԻ ԳԱԻԻԹՆ ՇԻՆԵԼՈՅՆ, ՈՐ ԳԼՈՒԽՆ ՍՐԲԱՏԱՆ ՔԱՐԱՆՑ ՇԻՆԵՑԻՆՔ (ԴՀՎ II, 35)։

Մեզ հայտնի արձանագրություններում թումանին զուգահեռ մեկ անգամ գործածված ենք տեսնում ԴԻՄՆ՝ Բուն Աղվանքի Աղսուի շրջանի Հնդար գյուղի միջին թաղի գերեզմանոցի մի տապանաքարի վրա. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՏԷՐ ՍԱՀԱԿԻ ՈՐԴԻ ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄԱ, ԹՎԻՆ ՌՃԾԲ (1703) ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄԻ ԿՈՂԱԿԻՑ ՇԱՀՍՈՒԼԹԱՆ ԱՅՍ .Ե. ՔԱՐՍ ՇԻՆԵՑԻ, .Ե..Ռ. (5000) ԴԻՄՆ ԽԱՐՋ ԱՐԻ (Կարապետյան 1997, 9)։

Կարծում ենք՝ դիանը դինարի արտասանության կրճատ ձևն է։ Եթե սկզբում 10 000 դինարը հավասար է եղել 1 թումանի, հետևապես, 5000 դիանը կլինի 0,5 թուման։

---

4 Կարծում ենք՝ Մարտիրոսը Վայոց ձորի գյուղն է, որտեղից, ինչպես երևում է, ուխտի են գնացել Ճահուկ (Շահախոնք) գավառի Օձոփի նշանավոր վանք։

1828 թ. Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացմամբ պարսկական թումանը մի տևական ժամանակ, մինչև ռուբլուն իր տեղը զիջելը, մնացել է շրջանառության մեջ. 1847 թ. աշտարակցի Հովակիմի որդի Խեչանը և նրա կին Մաթանը քաղաքի Ս. Մարիանե եկեղեցուն են տվել 25 ԹՄՆ (ԹՈՒՄԱՆ), ՎՍ (ՎԱՄՆ) ՈՐՈՅ ՀԻՆԳ ՆԱՎԱԿԱՏԵՑ ՅԻՇԱՏԱԿԵՆ ՄԵՋ Ի ՄԵՋ ՊՏՐԳ ԻՆ (ՊԱՏԱՐԱԳԻՆ) (Սաղումյան 1998, 214): Այսինքն՝ Հայ եկեղեցու հինգ տաղավար տոներին (Ս. Ծննդյան, Ս. Հարության, Վերափոխման, Պայծառակերպության, Խաչվերացի) մատուցվող պատարագների ժամանակ ժամարարները պետք է հիշատակեին նվիրատու ամուսինների անունները:

Հետաքրքրական է, որ հայ վիմագրության մեջ հանդիպում են դրամի անվանումներով անձնանուններ: Այսպես, Վահանավանքի արքունական դամբանատան տապանաքարերից մեկի վրա փորագրված է ԴԻՆԱՐ[5] (Գրիգորյան 2007, 50):

Հովհաննավանքի ժամատան հյուսիսային պատի 1288 թ. նվիրատվական արձանագրությունում հիշատակվում է ԴՐԱՄԻԿ (Ղաֆադարյան 1948, 103–104), Սաղմոսավանքի 1558 թ. վիմագրում՝ ԹՈՒՄԱՆ (Մանուչարյան 2019, 153):

Եզրակացություն

Այսպիսով, վիմագրերի համակողմանի քննությունը հնարավորություն է ընձեռում ներկայացնելու Հայոց մեջ հիմնական դրամական անվանումների գործածության ժամանակագրական սահմանները.

10–13-րդ դարի սկիզբ – Դրամ

11–14-րդ դարի առաջին կես – Դահեկան (Դեկան)

13-րդ դարի վերջ – Դուկատ

13–14-րդ դարեր – Սպիտակ

15-րդ դարի կես–17-րդ դարի կես – Ստակ

17-րդ դարի կես–19-րդ դարի կես – Թուման

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկզբնաղբյուրներ

ԱՃԱՌՅԱՆ 1971Ա – Աճառյան Հր. Հ., Հայերեն արմատական բառարան, Հատոր Ա, Երևան, 1971:

ԱՃԱՌՅԱՆ 1971Բ – Աճառյան Հր. Հ., Հայերեն արմատական բառարան, Հատոր Բ, Երևան, 1971:

ԴՀՎ I, 1966 – «Դիվան հայ վիմագրության», Պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966:

ԴՀՎ II, 1960 – «Դիվան հայ վիմագրության», Պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960:

ԴՀՎ III, 1967 – «Դիվան հայ վիմագրության», Պրակ III, Վայոց ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967:

5 Գր. Գրիգորյանի պարզաբանմամբ՝ Դինարը Սամցխե-Մեսխեթի իշխանաց իշխան Գուրգենի քույրն էր, որն ամուսնացած էր Սյունյաց իշխան Ատրներսեհի հետ (10-րդ դար):

ԴՀՎ IV, 1973 – «Դիվան հայ վիմագրության», Պրակ IV, Գեղարքունիք. Կամոի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1973:

ԴՀՎ V, 1982 – «Դիվան հայ վիմագրության», պրակ V, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982:

ԴՀՎ VI, 1977 – «Դիվան հայ վիմագրության», պրակ VI, Իջևանի շրջան, կազմեցին Ս. Ա. Ավագյան, Հռ. Մ. Ձանփոլադյան, Երևան, 1977:

ԴՀՎ IX, 2012 – «Դիվան հայ վիմագրության», Պրակ IX, Լոռու մարզ, կազմեցին Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Տ. Սաղումյան, Երևան:

ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, 1944, II – «Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, Հատոր II, Երևան, 1944:

ОРБЕЛИ 1974 – Орбели И. А., Надписи Мрена, «Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1974, Պրակ Ա, էջ 33 – 43:

Գրականություն

ԱՅՎԱԶՅԱՆ Զ, 2010 – Այվազյան Ա. Ա., Նախիջևանի վիմագրական ժառանգությունը, հ. Զ, Ճահուկ-Շահապոնք գավառ, Երևան, 2010:

ԱՎԱԳՅԱՆ 1978 – Ավագյան Ս.Ա., Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978:

ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ 1927 – Ավդալբեգյան Թ. Հ., Մի գաղտնիք հայ վիմագրության մեջ, Երևան, 1927:

ԲԱԲԱՅԱՆ, ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ 2001 – Բաբայան Ֆ. Ս., Քալանթարյան Ա. Ա., Ուշիի ս. Սարգիս վանքի վիմական արձանագրությունները, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2001, № 2, էջ 169 – 199:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՅՈՎՍԷՓԵԱՆ Ա, 1935 – Գարեգին արքեպս. Յովսէփեան, Նիւթեր և ուսումնասիրութիւններ հայ արուեստի և մշակոյթի պատմութեան, Երուսաղէմ, 1935:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ՅՈՎՍԷՓԵԱՆ 1969 – Գարեգին արքեպս. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 1966 – Գրիգորյան Գր. Մ., Դրամական հարաբերությունների զարգացումը Սյունիքում և Ստ. Օրբելյանի «Հարկաց ցուցակի» խնդիրը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1966, № 2, էջ 45 – 58:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2007 – Գրիգորյան Գր. Մ., Վահանավանք, Երևան, 2007:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 1997 – Կարապետյան Ս. Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Երևան, 1997:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2016 – Հարությունյան Ա. Է., Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Երևան, 2016:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 1957 I – Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Գիրք I, Երևան, 1957:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1948 – Ղաֆադարյան Կ. Գ., Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1963 – Ղաֆադարյան Կ. Գ., Հաղբատ, Երևան, 1963:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1975 – Ղաֆադարյան Կ. Գ., Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975:

ՄԱՆԱՆԴՅԱՆ 1930 – Մանանդյան Հ. Հ., Կշիռները և չափերը հնագույն հին աղբյուրներում, Երևան, 1930:

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ 2014 – Մանուչարյան Ա. Գ., Փարպիի Ծիրանավորի արձանագրությունները, «Էջմիածին», 2014, համար Գ, էջ 133 – 144:

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ 2019 – Մանուչարյան Ա. Գ., Հայոց եկեղեցու պատմության վիմագրագիտական-պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2019:

ՄՈՒՇԵՂՅԱՆ 1983 – Մուշեղյան Խ. Ա., Դրամական շրջանառությունը Հայաստանում, Երևան, 1983:

ՍԱՂՈՒՄՅԱՆ 1998 – Սաղումյան Ս. Տ., Աշտարակ. պատմական անցքեր, հուշարձաններ, վիմական արձանագրություններ, Երևան, 1998:

«Վիքիպեդիա» էլեկտրոնային հանրագիտարան՝ https://hy.wikipedia.org/wiki/%D4%B4%D5%B8%D6%82%D5%AF%D5%A1%D5%BF:

Ashot Manucharyan
Institut of Archaeology and Ethnography of NAS RA
ashot.manucharyan.1959@mail.ru

REFLECTION OF MONETARY NAMES IN ARMENIAN LAPIDAR INSCRIPTIONS

Keywords: dahekan, ducat, dram, spitak, stak, tangka, tuman.

Based on the rich Armenian epigraphic material, which has come down to us mainly from the developed Middle Ages, we see that money is most often embodied in the following terms: DAHEKAN (DEKAN), DUCAT, DRAM, SPITAK (SPITAK SULTANI), STAK, TANGKA, KINEIN (K), TUMAN, DIAN.

Spitak sultani, tanga, kineyin(k), dian are found in the lapidary inscriptions known to us only once.

Dram is mainly mentioned from the period of the Bagratuni kingdom (874/885 – 1045) until the tenth years of the 13th century. It was Arabic silver درهم (dirham) weighing 2.97 grams.

Since the reign of Bagratuni, the gold coin of the Dahekan (4.20 – 4.40 g) was used along with the dram until the first half of the 14th century. The ratio of dahekans to dram was 1:10.

Since the middle of the 11th century, in addition to the dram and dahekan, we have seen in circulation in Armenia the European gold ducat coin (weight: 3.5 g, gold fineness: 980). During this period, the ducat had a ratio of 1:1.5 to dahekan. The ducat was also used in lapidary inscriptions at the end of the 13th century.

In the 13th – 14th centuries, the most popular currency in Armenia was Spitak (white), which, as the name suggests, was originally a silver coin. Spitak was certainly a Mongolian coin that weighed 2.74 – 2.83 grams of silver. Seljuk silver coins (spitak sultani) and Mongolian copper coins (weighing 3 – 5 g) were also in circulation.

From the middle of the 15th century to the middle of the 17th century, stak was mainly in circulation in Armenia. True, the name stack, according to Hr. Acharyan, comes from the word spitak (white), which suggests that it was a silver coin, but it had an unprecedented and unique value.

With a comparative epigraphic study, it is revealed that 1 stak was equal to 15 – 20 ducats, 20 – 25 dahekans, 100 – 150 spitaks, 200 – 250 drams, and also 4 tumans.

The latter is most often found in Armenian lapidary inscriptions of the mid-17th – mid-19th centuries.

Ашот Манучарян
Кандидат исторических наук, доцент

Институт археологии и этнограффии НАН РА
ashot.manucharyan.1959@mail.ru

ОТРАЖЕНИЕ ДЕНЕЖНЫХ НАИМЕНИВАНИЙ В АРМЯНСКИХ ЛАПИДАРНЫХ НАДПИСЯХ

Ключевые слова: дахекан, дукат, драм, спитак, стак, танка, туман.

Опираясь на богатый армянский эпиграфический материал, дошедший до нас в основном из развитого средневековья, мы видим, что деньги чаще всего воплощаются в следующих терминах:

ДАХЕКАН (ДЕКАН), ДУКАТ, ДРАМ, СПИТАК (СПИТАК СУЛТАНИ), СТАК, ТАНГКА, КИНЭИН(К), ТУМАН, ДИАН.

Спитак султани, танга, кинэин(к), диан встречаются в известных нам лапидарных надписях по одному разу.

Драм в основном упоминается с периода царства Багратуни (874/885 – 1045 гг.) до десятых годов 13-го века. Это было арабское серебро درهم (дирхам) весом 2,97 грамма.

Со времен правления Багратуни золотая монета дахекан (4,20 – 4,40 г) использовалась наряду с драмом до первой половины 14-го века. Соотношение дахекан к драму составляло 1:10.

С середины 11-ого века, помимо драма и дахекана, мы видим в обращении в Армении европейскую золотую монету дукат (масса: 3,5 г, проба золота: 980). В этот период дукат имел соотношение 1:1,5 к дахекану. Дукат использовался в лапидарных надписях также в конце 13-го века.

В 13 – 14-ом веках самой ходовой валютой в Армении был спитак (белый), который, как следует из названия, изначально была серебряной монетой. Спитак, безусловно, была монгольской монетой, которая весила 2,74 – 2,83 г серебра. В обращении также находились сельджукские серебряные монеты (спитак султани) и монгольские медные монеты (весом 3 – 5 г).

С середины 15-ого века до половины 17-го века в Армении в основном находился в обращении стак. Правда, название стак, по свидетельству Гр. Ачаряна, происходит от слова спитак (белый), из чего можно предположить, что это была серебряной монетой, но она имела беспрецедентную и уникальную ценность.

Со сравнительном-эпиграфическом исследованием выявляется, что 1 стак равнялся 15 – 20 дукатам, 20 – 25 дахеканам, 100 – 150 спитакам, 200 – 250 драмам, а также 4 туманам. Последняя чаще всего встречается в армянских лапидарных надписях середины 17-ого-середины 19-го вв.

ԱՀԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ